# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԲՄԾՁԲ-26/1 ծածկագրով բաց մրցույթի արդյունքում 2025թ-ի դեկտեմբերի 22-ին կնքված ՊԵԿ-ԲՄԾՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրում 2026թ-ի մարտի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ծառայությունների մատուցումը իրականացվում են այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով 13.03.2026թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 7.14 կետի համաձայն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ (ՀՀ կառավարության 25 դեկտեմբերի 2025 թվականի N 1920-Ն որոշում):

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 844-704:

Էլ. փոստ՝ gurgen_ghazaryan@taxcervice.am:

Պատվիրատու՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**

**Համաձայնագիր-1**
**22.12.2025թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

**ք. Երևան** « 13 » Յունվարի 2026թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Դ.Մաթևոսյանի մի կողմից, և «ԴԵԼՏԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս «ԴԵԼՏԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ-ի տնօրեն Լ.Գեղամյանի, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 22.12.2025թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը հետագա համագործակցության նպատակով որոշեցին՝**

1.1. Պայմանագրի 7.14 կետին համապատասխան հաստատել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1" 2" 22.12.2025թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի հունվարի 1-ից ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

**Դ.Մաթևոսյան**
------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԴԵԼՏԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ
ք.Երևան, Սայաթ-Նովա-13, բն.5
«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2479000638400000
ՀՎՀՀ 02645541
«ԴԵԼՏԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝

**Լ.Գեղամյան**
------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված
Հաստատված է
«22» դեկտեմբերի 2025թ. կնքված
N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-26/1 գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ. որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1 | Nuctech MT1213LH ռենտգենյան սարքավորման տեխնիկական վերանորոգման և սպասարկման ծառայություններ CPV-50421300/515 | 4239 | | | 23,560,000 | 58,910,000 | 58,910,000 | 58,910,000 | 94,260,000 | 94,260,000 | 94,260,000 | 141,400,000 | 141,400,000 | 141,400,000 | **141,400,000** |

*Վճարման գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Դ.Մաթևոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԴԵԼՏԱ ԿՈՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ
ք.Երևան, Սայաթ-Նովա-13, բն.5
«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2479000638400000
ՀՎՀՀ 02645541
«ԴԵԼՏԱ ԿՈՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Լ.Գեղամյան
(ստորագրություն)
Կ.Տ